ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ հաստատված ՀՀ պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի **2026 թվականի ապրիլի 20-ին և 23-ին կայացած նիստերի ընթացքում հավանության են արժանացել Արմավիրի մարզի թվով 9 սուբվենցիայի ծրագրեր:**

Այդ ծրագրերն են՝

Ծրագրի անվանումը	**Ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ**	**Միջգերատեսչական հանձնաժողովի դիրքորոշումը**
Արաքս համայնքի Արտիմետ գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, Մեծամոր գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, Հայկաշեն գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում, Լուսագյուղ գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում, Ջրարբի գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, Ապագա գյուղի մանակապարտեզի շենքի ներքին հարդարում և բակի բարեկարգում, Առատաշեն գյուղի մանակապարտեզի հին մասնաշենքի ներքին հարդարում, Խորոնք գյուղի մանկապարտեզի բակի բարեկարգում	250 290 112	դրական
Խորոնք գյուղի Վ. Վարդանյան փողոցի ջրահեռացման երկկողմանի համակարգի կառուցում, Առատաշեն գյուղի Մաշտոցի, Երիտասարդական, Գ. Նժդեհ փողոցների ջրահեռացման համակարգի կառուցում, Գրիբոյեդով գյուղի Սունդուկյան, Մաշտոց և Դաշտենց փողոցների ջրահեռացման համակարգի կառուցում, Ջրառատ գյուղի Ուղեկալների և Գ. Չաուշ փողոցների ջրահեռացման համակարգի կառուցում, Ջրարբի գյուղի Սևակ, Թումանյան փողոցներիջրահեռացմանհամակարգիկառուցում, Լուսագյուղ գյուղի Խանջյան, Սայաթ-Նովա փողոցների ջրահեռացման երկկողմանի համակարգի կառուցում, Ակնաշեն գյուղի ջրահեռացման համակարգի կառուցում, Մեծամոր գյուղի Սարյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցում, Հայկաշեն գյուղի 4-րդ, 11-րդ, 2-րդ փողոցի ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի կառուցում, Արտիմետ գյուղի Թումանյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցում	262 950 508	դրական
Արաքս համայնքի Արաքս գյուղի Գ. Նժդեհ, Խոստիկյան, Բարեկամություն փողոցների ջրահեռացման և Բարեկամության փողոցի ջրամատակարարման համակարգերի կառուցում, Արաքս համայնքի Գայ գյուղի Գարնանային, Գարնանային 2, Գարնանային 3, Սարյան3, Սարյան 4, 20-րդ, Երևանյան 6, Երևանյան 7, Իսահակյան փողոցների ջրահեռացման համակարգերի կառուցում	213 021 320	դրական

Արաքս համայնքի Գայ գյուղի կենտրոնական այգու բարեկարգում, Գայ գյուղում գտնվող եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում և Արաքս գյուղի մշակույթի տան հարակից տարածքի բարեկարգում	239 897 300	դրական
Մեծամոր համայնքի Ալաշկերտ, Արմավիր, Արևիկ, Արտաշար, Արգավանդ, Այգեշատ, Գետաշեն, Հայկավան, Նալբանդյան, Երասխահուն, Եղեգնուտ, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Շենավան, Տանձուտ, Տարոնիկ, Ջրաշեն և Վարդանաշեն բնակավայրերի մի քանի փողոցների կառուցման /ասֆալտապատման/, Զարթոնք բնակավայրի 5-րդ փողոցի, 8-րդ փողոցի, 11-րդ փողոցի և 15-րդ փողոցի ասֆալտապատման, Նոր Արմավիր բնակավայրի 1700գծմ երկարությամբ փողոցների կառուցման աշխատանքներ	4 138 658 923	դրական պայմանով, որ 2026 թվականին կիրականացվեն աշխատանքների 1/3 մասը՝ 2,952 մլրդ դրամ ընդհանուր արժեքով փողոցների հինանորոգման աշխատանքներ, իսկ մնացածը կիրականացվեն 2027 և 2028 թվականներին
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ, Բերքաշատ, Մարգարա, Փշատավան, Ջանֆիդա բնակավայրերի մի քանի փողոցների կառուցման /ասֆալտապատման/, Ակնալիճ բնակավայրի Հոկտեմբերյան փողոցի կառուցման, Տ-3-6 տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 2+000-կմ 4+150 հատվածի հիմնանորոգման, Ամասիա բնակավայրի 1-ին փողոցի հիմնանորոգման, մայթերի և ջրահեռացման համակարգի կառուցման, Բամբակաշատ բնակավայրի Կենտրոնական փողոցի մայթերի, ջրահեռացման համակարգի և մի քանի փողոցների կառուցման, Մրգաշատ և Նորապատ բնակավայրերի մի քանի փողոցների կառուցման աշխատանքներ	4 718 147 071	
Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Ռազմիկ Արշակյան փողոցի, Մայիսյան փողոցի, Երևանյան 2-րդ նրբանցքի, Հարություն Աբրահամյան փողոցի, Ռ.Գասպարյան փողոցի, Թաիրով բնակավայրի Կ.Դեմիրճյան 8-րդ փողոցի, Բաղրամյան բնակավայրի Այգեգործների փողոցի մի հատվածի, Նորակերտ բնակավայրի Շինարարների փողոցի ասֆալտապատում	548 313 520	դրական
Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Մայիսյան, Ռազմիկ Արշակյան, Ռ.Գասպարյան փողոցների և Երևանյան 2-րդ նրբանցքի կոյուղու կառուցում	159 231 930	դրական
Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Երևանյան փ. 1-ին նրբանցքի, Վ.Տերյան փողոցի, Աճառյան փողոցի, Է.Թևոսյան փողոցի /մի հատված/, Բաբաջանյան փողոցի, Փափազյան փողոցի, Վ.Համբարձումյան փողոցի, Հ.Թումանյան փողոցի, Գ.Էմին փողոցի, Մուրացան փողոցի, Նալբանդյան փողոցի, Անդրեասյան փողոցի, Գ.Նժդեհ փողոցի խմելու ջրի ջրագծի վերակառուցում, Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների խմելու ջրի ջրագծի կառուցում	273 873 600	դրական
Ընդամենը	***10 804 384 284***	

*Ընդհանուր առմամբ, միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի ընթացքում արդեն հավանության են արժանացել մարզի թվով 18 սուբվենցիայի ծրագրեր:

Առաջարկվել է Մեծամոր, Արաքս և Փարաքար համայնքների ղեկավարներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել ծրագրերի իրականացման մրցույթները՝ ապահովելով արդյունավետ, հնարավորինս թափանցիկ և նվազագույն ռիսկերով մրցութային գործընթաց:

Դրական պայմանով հավանության արժանացած Մեծամոր համայնքի թվով 2 ծրագրերի մասով՝ առաջարկվել է մինչև համապատասխան մրցույթներ հայտարարելը հաշվի առնել միջգերատեսչական հանձնաժողովի դիտարկումները՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն (աշխատանքների 1/3 մասը 2026 թվականին, իսկ մնացած մասը 2027 և 2028 թվականներին իրականացնելու մասին):

Սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված մարզի մի շարք սուբվենցիոն ծրագրերի քննարկումները միջգերատեսչական հանձնաժողովի նիստերում շարունակվում են: